

րաքանչիւր աշակերտ, հտմբակ, տպէտ և անուս իւր անունը տպագրուած տեսնելու տենչով վառուած, առնում այս տեղից և այն տեղից արտագրում կամ աղճատում և լոյս է ընծալում։ Ափսոս թուղթ, ափսոս գրաշարի աշխատանք։ Անմահ Խորենացին սրապիսեաց մասին է ասել, թէ «աշակերտք հեղդ առ ի լուսումն և փոլթ առի վարդապետելու։

Մի ալսպիսի ոզորմելի մըոտուածք ևս մի օրիորդի անուն է կրում, խղճուկը բարի կամք է ունեցել, բայց զուրկ է եղել կարողութիւնից։ Այդ ազնիւ օրիորդը արտագրել է մեր սովորական երգուող ոտանաւորներն և մի ժողովածու է կազմել, Աստուած գիտէ, թէ քանիցս մեղանչելով անպարտ հեղինակների դէմ։ միակ նախադասութիւնը, որ ինքն է կազմել, գտնուում է գըքուկի ճակատին։ «Յօգուափ» մի մասը Ախալքալակի երկրաշարժից վնասուածներին, օգուտ բառի սկզբնական ձեր չը գիտենալ և մի ամբողջ գիշը հրատարակել։ ահա մի գործ, որ կը պսակուէր արժանապէս, եթէ հրատարակուած լինէր հայերէն գըքերի հրատարակութեան ընկերութեան ձեռքով։

Ն. Պ.

ԲԱՐՈՅԵԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՍՏՈՒԵՐԼ.

Հգնատիոս Լոյօլա. Նրա կեանքը եւ հասարակական գործունէութիւնը. (պատկերով) կազմեց Լեւոն Մ.-Ադ. Թիֆլիս. տպ. Ռոտինեանցի. 1899. երես. 121: Գինն է 30 կ:

Թէ կեանքի և թէ հասարակական գործօնների ուսումնասիրութիւնը պէտք է երկու կողմից յառաջ ընթանայ, որ ժողովուրդը կարողանայ ապահով գաղափար կազմել ճշմարտութեան մասին։ Լոկ դրական ուսումնասիրութիւնը բաւարար չէ, քանի որ համեմատութեան միջոց չէ տալիս, գիտակցական չէ

դարձնում և բացասականի երեալով տատանւում է, վասն զի բացասականը իւր նորութեամբ զրաւում է տկար մաքերը: Այդպէս և լոկ բացասականի ուսումնասիրութիւնը ոչինչ չէ տալիս, աւերում է եղածը և իւր հետեղներին ձգում է մրրկածուկ ծովի պատահական և փոփոխական ալիքների մէջ Բացասական հայեացքներով մարդը բովէներով է ապրում, չունի անցեալ և չունի ապագայ, ներկան էլ նորա համար մի անհրաժեշտ խաղ է, որի մէջ ինքն էլ մի խաղալիք է: Իսկ բացասականին անծանօթ դրական մարդը հեռու է գործունէութիւնից ու կենդանի ընթացքից և աշխարհի ընդհարումների մէջ անպատրաստ է ոչ միայն կուռելու, այլ և անձնապաշտպան լինելու և յարձակման դիմանալու համար: Դրականն այն ժամանակ է զօրեղ ու գործօն, երբ ծանօթ ու կշռած է բացասականի էութիւնն ու ոյժը, մանաւանդ որ չկայ լոյս առանց ստուերի:

Մարդկային կեանքի հզօր գործոնն ու զեղավարը, լուսաւորողն ու կենդանացնողը քրիստոնէութիւնն է, որ որտեղ մտաւ, հզօրապէս կենդանագործեց: Արևմտեան Նւրոպան քաղաքակրթութեան դրօչակը բարձրացընց և ախեղերական պատմութեան մէջ յառաջընթաց եղաւ դարեր շարունակ քրիստոնէութեան շողերի տակ, մինչդեռ այդ շողերից գուրս բացի մեռելութիւնից կամ անբան կեանքից ոչինչ չկարողացաւ ցոյց տալ հեթանոս աշխարհը: Հռովմը հեթանոսութեան գագաթնակէտին հասնելուց յետոյ իւր անկումից ազատուեց քրիստոնէութեամբ, դժբախտաբար քրիստոնեայ Հռովմը մեծապէս գործելով արևմուտքում ու զօրանալով՝ չկարողացաւ թափ, տալ իւրեանից հեթանոսական մոլորոտ յիշատակները:

Դարերի ընթացքում նա չկարողացաւ, բայց և չկամեցաւ հեռանալ այդ յիշատակներից և գնալով ու գնալով մինչև ուղեղն ու ծուծը թարթափուեց հեթանոսական խաւարով: Դար չանցաւ, տասնեակ տարիներ անդամ չանցան, որ աշխարհը մի նոր ստուեր, մի նոր մէգ ու մառախուղ չաեսնէր աւելացած այդ կոչումը կորցրածների վերայ:

Հեռու կերթայինք՝ եթէ այդ ամենը նկարագրէինք, սակայն դոցա մէջ բարոյականութեան ստուերը ճանաչելով կարելի է բաւականաշափ ծանօթանալ այդ անկման: Ինքուիդիցիան և եզուիթութիւնը Հռովմի աջ ու ձախ թեսներն են: Երբ Լատերանի 1215 ի և Տուլուզի 1229 թուի ժողովները հաւատաքննական

որոշումներ կայացրին, Գրիգոր Թ. պատկ 1232 թուին հիմնեց հաւատաքննութեան առեանը, որ կազմակերպուելով Սպանիայում աւերեց ու կենդանութիւնից զրկեց այդ հզօր երկիրը։ Այն ինչ որ չկարողացաւ կամ ոչ ամենուրեք կարողացաւ անել ինքուիդիցիան, յանձն առաւ եզուիթութիւնը։ Ահա այս եզուիթութեան ծագումն ու պատմութիւնն է տալիս ալ. Մ.-Ադ.

Որբան ինձ յայտնի է՝ հաւատաքննութեան վրայ հայերէն երկու գիրք ունինք՝ Գտղտնիք հաւատաքննութեան, թարգ. Գտղիերէնից կ. Իւթիւճեան, խմբ. Մասիս լրագրի. կ. Պոլիս 1874. և Խնկվիզիցիայ թարգմ. Յակոբ Կարինեանցի ու Միքայէլ Պատկանեանցի. Երկու հատոր. Տիմիս 1853. Երկուսն էլ նշանաւոր հեղինակների գործ Խոկ եզուիթութեան մասին միայն մի գիրք գիտենք՝ Ճիզվիթն. թարգմ. Գտղիերէնից. Յ. Աթարեան. Կ Պոլիս, որ տեսած չենք։ Կ. Ա. Ադ. ի հրատարակածը ոկտափ է լրացնէ Հայոց զրականութեան մէջ մի պակաս։ Թէ ինչքան անհրաժեշտ է այդ պակասը լրացնել, այդ նկատելի կլինի եթէ չմոռանանք, որ եզուիթները քանի գնում այնքան զօրանում են և այժմ դիտնականների մէջ ոչ թէ եզուիթութիւնն է ինքն ըստ ինքեան միակ զբաղեցնողը, այլ մանաւանդ այն հարցը՝ թէ այժմեան Հոռվմէական եկեղեցին որքան չէ եզուիթական, կամ այն որոշումը, որ «Հոռվմէական» ու եզուիթական» նոյնանիշ բառեր են։ Դոքա այնպէս ձուլուել են իրար հետ ու մակարդուել, որ Կղեմէս ԺԴ. իւր «անօխալական» բռւլլայով անդամ չկարողացաւ ոչնչացնել եզուիթների օրդենները, այլ մինչև անդամ Հոռվմէական ուրիշ վանքերն էլ հետզնեաէ կերպարանափոխութեան այդ օրդենի ստուերի պատկերով։ Զուր չէ ասել եզուիթների գեներալ Ֆրանց Բորժիան, իբրև յաւիտենական սկզբունք եզուիթների.

„Երբե գառներ ներս սպրդուեցանք.

Երբե գայլեր կառավարելու ենք.

Երբե շների մեզ դուրս կքշեն.

Երբե արծիւներ նորից յետ կդառնանք։

Քանի որ հայերէն ոչինչ չունինք եզուիթութեան մասին գրուած, զարմացանք՝ երբ գրքի վերջում կարդացինք՝ «Թիֆլիսի Հայոց հրատարակչական Ընկերութիւնից մերժուած»։ Զենք կարծում որ թերութեանց համար լինի այս զիրքը մերժուած, վասն զի կարելի պէտք է լինէր առաջարկելու կազմողին՝ լրա-

ցնել նկատուած պակասները և նորից ներկայացնել ընկերութեան: Զլինի թէ նոր սկզբունքներով են առաջնորդում բացասական կետնքի՝ այդ պահապանողականները:

Պ. Մ.-Ա.դ. ի այս դիրքը ուժը գլուխ ունի և գրեթէ ամբողջ ապէս կենսագրական է: Միմիայն մի գլուխն է՝ «Եզուփիթական կարգի կանոնագրութիւնը» 82—102 երես. այսինքն ընդամենը 21 երես: Մնացած զլուխներն են 1. Լոպէց դէ Ռըկալպիէ աղնուականը 2. Հողենոր թափառական ասպետը 3. Լոյօլան քարոզիչ. 4. Պօղոս Դ. պապը և իւր կարդինալները. 5. Ցիսուսեան ընկերութեան հիմնուիլը. 6. գեներալ Խզնատիոս Լոյօլա. 7. Եզուփիթները Ռուսաստանում:

Որքան էլ բաւական մնանք գրուածքից և շնորհակալ լինինք կազմողին իւր այս աշխատանքի համար, այնու հանդերձ պէտք է նկատենք՝ որ դիրքը թերատ է: Մենք չենք կարող պահանջել, որ պ. Մ.-Ա.դ. ը եզուփիթական օրդենի դադանի կարգերը և սկզբունքները յառաջ բերէր, որոնք գրեթէ բոլոր նոր լիզուներով հրատարակուած կան. բայց մենք կարող կիխինք ցաւելու, որ պահանջ է դրքի մի երկրորդ մաս: Միմիայն Լոյօլայի կենսագրութիւնը շատ ու շատ քիչ բարոյական օրինակ կարող է տալ—իբրև կամքի աէք մարդ—սակայն նորա ուղղութեան անբարոյական ընթացքը չի կարող թոյլ տալ, որ նա մինչև անդամ լոկ յիշելի մի օրինակ դառնայ. Ապա ուրեմն անհրաժեշտ էր եզուփիթական օրդենի գոնէ հիմնական այն գարշելի վարդապետութիւնը և գործնական վարպետութիւնը պատկերացնել, որ իւր հակակրելի ազգեցութեամբ կըթիչ լինի զգուշութեան, այլ և հակառակ կողմից ճշմարտութիւնը փայլի: Եզուփիթների եկեղեցական և քաղաքական գործունէութիւնը, քարոզութիւնը, նոցա ոյժը Հռովմ եկեղեցում, կրօնական վարդապետութիւնը, դիտութիւնը, դալրոցների ուսուցումը և դաստիարակութիւնը և մանկագարժութիւնը և այլն, պէտք է անպատճառ տեղ բռնէին մի այդպիսի գրքում, որ պէտք է լիակատար ծանօթութիւն տայ դոցա մասին ընթերցողին և ոչ թէ մի քանի գրքերի մէջ՝ որոնք չկան՝ լրացուցիչ լինի: Այդ նպատակի համար պ. Մ.-Ա.դ. ը կարող էր առատապէս օգտուել ուսւգրականութիւնից, նորերս էլ Պավլենկովը հրատարակեց «Հուրեց Եզուփիթները»: Մի լրացուցիչ մաս, ուշ չէ, կարելի է նաև իբրև երկրորդ մաս հրատարակել:

Տեղի սղութիւնը և մատենախօսական նեղ շրջանակը չեն-
թոյլ տալիս բովանդակութեան վրայ մանրամասն խօսելու. ա-
սենք միայն, որ բաւական վառվուուն լեզուով է գրուած: Կազ-
մողը գործ է ածում անխտիր «Յիսուսեան» և «Եղուկտետն»:
Կոչումները. սակայն առաջինը երբէք չպէտք է գործածել, ինչ-
պէս ժողովուրդը իւր հեղինակութեամբ արդէն ձևակերպել է:
Քանի որ այդ կարգը Յիսուսի անունից շատ ու շատ հեռու է
իւր արժանիքով՝ հայ ժողովուրդը իւր լեզուի օրինական ողով
անուանել է ոչ թէ իւր՝ այլ՝ նոյն իսկ այդ կարգի սրբագործող-
ների լեզուով—«Եղուկիթ», կամ աւելի ևս դիպողապէս «Ճիզուկիթ»:

Երբեմն երբեմն պատահում են և ոչ հայերէն բառեր, ո-
րոնցից գրական լեզուն պէտք է խոյս տայ, ապա թէ ոչ՝ գուրս-
կգայ մի խառնակ և ապագայում խորթ լեզու. Կենդանի լեզուն
քերականութեամբ և ճշութեամբ պէտք է իշխէ. Ի՞նչ կարիք-
կայ, զօրինակ, գրել «Թարղ» (գաւակ), փասափուսէն, փա-
փուջի տակ (կապերտի տակ) կամ սխալ ձեեր, ինչպէս Աստ-
ծու, տիրապետել իտալական լեզուին (լեզուն), խանգա-
րում էին յառաջ գնալուն (գնալը), խնձրազօռ ու թեթևո-
մեկ տիկիններ, մորքին զրաւ (մտքում), մանաւանդ անյարմար-
ոներ՝ ինչպէս շանսատակ անել, լրբեր և այլն: Դոցա պատ-
կերի նկարագրութիւնն արդէն բաւարար հարուած կլինի, այլ
եւս ինչ կարիք կայ այդպիսի արտայայտութիւնների: Դոցա
կեանքի դէսքերն ու սկզբունքները այդպիսի բառերից իմաս-
տով շատ աւելի պարունակութիւն ունին, պէտք է միայն պատ-
կերանան ընթերցողի առաջ,

Արշակ Ցէր-Միթելեան.

